Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

# ՀԱՅՏ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | *ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆՔ -ԿԱԼԵՐ ԳՅՈՒՂԵՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՆ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ* |
| Մարզ | *Սյունիքի մարզ* |
| Համայնքը /համայնքները | *Մեղրի խոշորացված համայնքի Վարդանիձոր բնակավայր* |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | *Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 380կմ է, իսկ մարզկենտրոն Կապանից՝ 75կմ:* |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | *Մեղրի համայնքի բնակչությունը՝ 12869 մարդ:*<br>*Վարդանիձոր բնակավայրի բնակչությունը՝ 309 մարդ:* |
| Սահմանամերձ համայնք/բնակավայր | *Վարդանիձոր բնակավայրը* ***ընդգրկված է*** *ՀՀ կառավարության 17 նոյեմբերի 1998թ. N713 որոշմամբ հաստատված սահմանամերձ բնակավայրերի ցանկում:* |
| Բարձր լեռնային համայնք /բնակավայր | *Վարդանիձոր բնակավայրը* ***ընդգրկված չէ*** *ՀՀ կառավարության 27 նոյեմբերի 1998թ. N756 որոշմամբ հաստատված բարձր լեռնային բնակավայրերի ցանկում:* |
| Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | *Այո*<br><br>***22/12/2020թ.*** *- ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրերի փաստաթղթերի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 2-8 դրական եզրակացություն:*<br><br>***08/02/2021թ.*** *- «ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք 3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին » Սյունիքի մարզպետի որոշում:* |
| Համայնքի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br><br>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,<br><br>- գազամատակարարման համակարգից օգտվող | ***Ջրամատակարարում:*** *Համայնքի 12 բնակավայրերում (Մեղրի, Ագարակ, Լիճք, Տաշտուն, Թխկուտ, Այգեձոր, Վարդանիձոր, Լեհվազ, Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար, Կարճևան) առկա է շուրջօրյա ջրամատակարարում: Շվանիձոր, Ալվանք, Նռնաձոր բնակավայրերում խմելու ջուրը ստացվում է ստորգետնյա ջրհավաք կայաններից և սակավաջուր ամիսների ընթացքում լինում են ընդհատումներ /երբեմն մատակարարվում է 12 ժամյա գրաֆիկով/:Ջրամատակարարումից օգտվում են համայնքի բոլոր բնակիչները (100%):*<br><br>***Ջրահեռացում:*** *Ջրահեռացման համակարգ (կոյուղի) առկա է միայն Մեղրի և Ագարակ քաղաքներում:Գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Վարդանիձորում, ջրահեռացման համակարգ չկա: Ջրահեռացման համակարգից օգտվում են միայն քաղաքային բնակավայրերի բնակիչները, որոնք կազմում են ամբողջ համայնքի* |

| | |
|---|---|
| **համայնքի բնակչության տոկոսը,**<br><br>**- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,**<br><br>**- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ** | *բնակչության 78%-ը:*<br><br>***Գազամատակարարում:****Մեղրի համայնքում չկա գազամատակարարում, թեպետ Մեղրի և Ագարակ քաղաքներում իրականացվել են գազի բաշխիչ ցանցի կառուցման աշխատանքներ:*<br><br>***Ոռոգման համակարգ:*** *Ոռոգման ցանցի ջրագծերը ընդհանուր առմամբ գտնվում են բարվոք վիճակում: Ոռոգման համակարգից օգտվում է բնակչության 70 %-ը (այդ թվում Վարդանիձոր բնակավայրը): Գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքները կազմում են 75 %:*<br><br>***Լուսավորության համակարգ:*** *2017 թվականի ընթացքում Մեղրի համայնքի բոլոր բնակավայրերում ներդրվել է փողոցային լուսավորության էներգախնայող համակարգ: Լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը համայնքի ընդհանուր փողոցների մեջ կազմում է մոտ 35%: Հիմնականում լուսավորված են կենտրոնական փողոցները: Վարդանիձոր բնակավայրում նույնպես կենտրոնական փողոցը լուսավորված է:* |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | *Ծրագրով նախատեսվում է վերակառուցել համայնքի Վարդանիձոր բնակավայրի տարածքում գտնվող Վանք- Կալեր կամուրջը, որը Մեղրի համայնքի մյուս բնակավայրերին և Մ2 միջպետական ճանապարհին է կապում գյուղանտեսական նշանակության զգալի հողատարածքներ: Նշված կամուրջը կառուցվել է 1970–ական թվականներին և մինչ այժմ երբևէ չի վերանորոգվել: Այն գտնվում է կիսաքանդ վիճակում, կանգնած է փլուզման վտանգի առաջ, ինչը լուրջ դժվարություններ և մտահոգություններ է առաջացնում Վարդանիձոր գյուղի Վանք-Կալերի տարածքում գործունեություն ծավալող ֆերմերների մոտ: Կամուրջի հիմնանորոգումն ունի ստրատեգիական նշանակություն, քանի որ այս տարածքում գտնվում են մոտ 1610հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բերրի հողեր/որից՝ 1468 հա արոտավայրեր/, որոնք նպաստավոր են անասնապահության, պտղաբուծության /նուռ, խնձոր, սալոր/, բանջարաբոստանային տարբեր կուլտուրաների/ կարտոֆիլ, գազար, սխտոր/, մշակման համար: Այս տարածքները աչքի են ընկնում նաև վայրի ծաղիկների մեծ բազմազանությամբ, ինչի շնորհիվ բավականին նպաստավոր գոտի են մեղվապահության համար: Ներկայումս գյուղատնտեսական նպատակներով օգտագործվում են միայն նշված հողամասերի մոտ 25%-ը: Այստեղ ներկայումս գործունեություն են ծավալում ավելի քան 150 ֆերմերներ:*<br><br>*Հարկ է նշել, որ կամուրջը Մ2 միջպետական մայրուղին և Մեղրիի բնակավայրերը Վանքին ու Կալերին կապող միակ հիմնական ճանապարհն է:* |

| | |
|---|---|
| | *Առկա խնդիրներ*<br><br>➢ Վանք-Կալեր կամուրջի կիսաքանդ վիճակ և փլուզման վտանգ:<br><br>➢ Գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ավելի քան 150 ֆերմերների համար Վանք-Կալեր կամուրջով երթևեկման, գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղմթերքի, անասունների փոխադրման դժվարություններ:<br><br>➢ Վանք, Կալեր գյուղերում առկա հողային ռեսուրսների և հնարավորությունների թերօգտագործում:<br><br>➢ Անասնապահության և պտղաբուծության համար Վանք, Կալեր վայրերի ցածր գրավչություն՝ պայմանավորված այնտեղ տանող կամուրջի կիսաքանդ վիճակով և վտանգավորությամբ: |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *Ակնկալվող արդյունքներ*<br><br>➢ Վանք, Կալեր տանող 20մ երկարությամբ կամուրջը բարեկարգ է և անվտանգ<br><br>*Միջնաժամկետ ազդեցություն*<br><br>➢ Վանքում և Կալերում գյուղատնտեսությամբ զբաղվող ավելի քան 150 ֆերմերներ հնարավորություն ունեն հարմարավետ կերպով փոխադրել անասուններ, գյուղմթերք և գյուղտեխնիկա<br><br>➢ Մշակվող հողատարածքների ընդլայնում մոտ 150 հա-ով և մեղվաընտանիքների ավելացում տարեկան մոտ 5%-ով<br><br>➢ Վանքում, Կալերում արտադրվող գյուղմթերքի իրացման արդյունքում նախատեսվում է եկամուտների ավելացում տարեկան մոտ 2000.000 ՀՀ դրամով յուրաքանչյուր տնտեսությունում<br><br>➢ Վանքում, Կալերում գտնվող հողամասերը մրցունակ են համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների դեպքում<br><br>➢ Օգտագործվող խոտհարքերի ավելացում 163 հա-ով:<br><br>*Երկարաժամկետ ազդեցություն*<br>Ծրագիրը կնպաստի Մեղրի համայնքում գյուղատնտեսության զարգացմանը և գյուղատնտեսությունից ստացված եկամուտների շնորհիվ բնակչության կենսապայմանների լավացմանը:<br><br>Ծրագրի իրագործման արդյունքում հնարավոր կլինի հասնել վերոնշյալ |

| | |
|---|---|
| | խնդիրների լուծմանը և ծրագրի իրականացման նպատակներին, որոնք են՝<br><br>➢ Նպաստել Մեղրի համայնքում գյուղատնտեսության զարգացմանը:<br><br>➢ Բարձրացնել Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի գրավչությունը գյուղատնտեսական գործունեության համար:<br><br>➢ Նպաստել Մեղրի համայնքում մշակվող հողատարածքների և օգտագործվող խոտհարքերի ընդլայնմանը, պտուղ-բանջարեղենի արտադրության ծավալների, ինչպես նաև պահվող մեղվաընտանիքների աճին:<br><br>➢ Հասնել համայնքի բյուջեում գյուղատնտեսական նշանակության հողամասերի վաճառքից և վարձակալությունից, խոտհարքերի օգտագործումից ստացվող եկամուտների՝ տարեկան 500 000 ՀՀ դրամի աճի:<br><br>➢ Դյուրացնել գյուղատնտեսական տեխնիկայի, անասունների շարժը, ինչպես նաև Վանքում և Կալերում արտադրված գյուղմթերքի փոխադրումը:<br><br>Ծրագիրը համահունչ է Մեղրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ռազմավարությանը, որով Մեղրի խոշորացված համայնքի կայուն և համաչափ զարգացման գրավականներից են գյուղատնտեսության զարգացումը և ճանապարհային ենթակառուցվածքների բարեկարգումը: |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | Նախագծանախահաշվային փաստաթղթերն արդեն կազմված են:Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 7 **ամսվա** ընթացքում.<br><br>1. Շինարարական աշխատանքների գնման գործընթացի կազմակերպում **15/04/2022-15/05/2022:**<br><br>2. Շինարարական աշխատանքների իրականացում 20/05/2022-15/11/2022թ՝<br><br>(see table below)<br><br>4.Բարեկարգված կամուրջի հանձնում շահագործման 20/11/ 2022թ. |

| Աշխատանքի անվանումը | Նախահաշվային արժեք (ՀՀ դրամ) |
|---|---|
| 1.Նախապատրաստական աշխատանքներ | 4 514 265 |
| 2.Հողային աշխատանքներ | 2334,797 |
| 3.Երթևեկելի մաս | 786,3559 |
| 4.Արգելափակոցներ | 844,6045 |
| 5.Ուղղանկյուն խողովակ 2x(2,0x2,0 )մ | 44123,30 |
| **Ընդամենը** | **48540,49** |

| | |
|---|---|
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի** | *Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ հողատարածքները հանդիսանում են համայնքային սեփականություն:*<br><br>*Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են:* |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | ***Ծրագրի շահառուներ:***<br>➢ *Վանքում և Կալերում գործունեություն իրականացնող 150 և ավելի ֆերմերներ*<br>➢ *Մեղրի համայնք /բնակչություն՝ 12869 մարդ/*<br><br>***Հարմարավետության ապահովման չափ:***<br>➢ *Համայնքում բարեկարգ ճանապարհային ենթակառուցվածքի ավելացում 1-ով:*<br>➢ *Երթևեկության պայմանների բարելավում*<br>➢ *Գյուղատնտեսական տեխնիկայի, անասունների շարժի, ինչպես նաև Վանքում և Կալերում արտադրված գյուղմթերքի փոխադրման դյուրացում:* |
| **Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը** | ➢ ***Ծրագրի իրականացման ընթացքում*** *կստեղծվի 7-8 աշխատատեղ կառուցապատման իրականացման նպատակով:*<br>➢ ***Ծրագրի իրականացման արդյունքում*** *կդիտվի զբաղվածության աճ գյուղատնտեսության ոլորտում մոտ 4-5%-ով:* |
| **Համայնքի նախորդ տարվա** բյուջեն և բյուջեի կատարողականը | Նախորդ տարվա բյուջեն՝ 1.222.472.071 դրամ |

| | Պլանը | Փաստացին | Տոկոսը |
|---|---|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** *այդ թվում՝* | 1.014.973.858 | 917.626.637 | 90.4 |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 706.694.200 | 701.614.300 | 99.3 |
| *- Սեփական եկամուտներ* | 282.650.000 | 277.514.700 | 98.18 |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 308.279.658 | 216.012.337 | 70.07 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 1.222.472.071 | 903.907.796 | 73.94 |
| | *- Վարչական բյուջեի ծախսեր* | 708.707.816 | 629.642.711 | 88.84 |
| | *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 513.764.<br>255 | 274.265.<br>085 | 53.38 |
| | ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | 513.764.255 | 274.265.085 | 53.38 |
| | *Ճանապարհաշինություն* | 98.134.029 | 68783626 | 70.09 |
| | *- Հանգիստ մշակույթ և կրոն* | 3.893.560 | 1.580.000 | 40.5 |
| | *- Հանգիստ սպորտի ծառայություններ* | 117.441.<br>040 | 7.119.000 | 33.2 |
| | *- Նախադպրոցական կրթություն* | 225.801.<br>283 | 191.622.<br>866 | 84.86 |
| | *-Ոռոգման ցանցի կառուցում վերանորոգում* | 558.981 | 13.633 | 2.44 |
| | *-տրանսպորտային և վարչական սարքավորումներ* | 4.550.000 | 4.259.400 | 93.61 |
| | *Տնտեսական հարաբերություններ(այլ դասերին չպատկանող)* | -<br>28.000.000 | -26.801.953 | 95.72 |
| | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն* | 63.385.<br>362 | 886.560 | 1.40 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

**Ընթացիկ տարվա բյուջեն՝ 985.028.313** դրամ.

| | *Պլանը* |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում՝* | 906.095.313 |
| *- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 740.674.614 |
| *- սեփական եկամուտներ* | 331.820.214 |
| *- Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 165.420.684 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 985.028.313 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 740.674.614 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 244.353.699 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* | 244.353.699 |
| - Հանգիստ,մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող) | 52.035.418 |
| - Նախադպրոցական կրթություն | 42.645.637 |
| - Հանգստի և սպորտի ծառայություններ | 113.512.153 |
| - Ճանապարհային տրանսպորտ | 36.160.491 |
| - Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | 20.000.000 |

| | |
|---|---|
| **Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | Կապիտալ ծախսերի իրականացման համար գումարները գոյանում են հիմնականում ոչ ֆինանսական ակտիվների օտարումից, որոնք սահմանափակ են:<br>Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը՝<br><br>2020թ. կազմել են 25.273<br><br>2021թ կազմել են 26.801<br><br>2022թ. բյուջեի ֆոնդային մասով նախատեսված ծրագրերն իրականացնելու նպատակով ֆոնդային մասի մուտքերը պլանավորվել են հետևյալ կերպ.<br><br>Ընդամենը ֆոնդային մաս 248.330<br>այդ թվում՝<br>1. Տարեսկզբի ազատ մնացորդ 78.933<br>2.Ոչ պաշտոնական կապիտալ դրամաշնորհներ 12.380<br>3.Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր 20.000<br>4. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) 137.017 |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝**<br><br>**- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 1500000 դրամ,**<br><br>**- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 150000դրամ,**<br><br>**- ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ 100000 դրամ,**<br><br>**- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 1084713 դրամ,**<br><br>**- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 325438 դրամ,**<br><br>**- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ ________ դրամ,** | *ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆՔ -ԿԱԼԵՐ ԳՅՈՒՂԵՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՆ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ*<br><br>*Ծրագրի արժեքը՝ 51.700.641 ՀՀ դրամ* |

| | |
|---|---|
| ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը __________ դրամ | |
| *Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը* | *25 000 000 ՀՀ դրամ (48,35%)* |
| *Այլ ներդրողներ* | |
| *Ծրագրի իրականացման փուլողությունը* | Սկիզբը՝ 15 ապրիլի 2022թ.<br><br>Տևողությունը ՝ 7 ամիս: |
| *Ծրագրի ծախսերը* | *Կցվում են նախագծանախահաշվային փաստաթղթերը:* |
| *Ամսաթիվ* | *26 հունվարի 2022թ.* |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին** (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյան
(անունը, ազգանունը)

Տնտեսական զարգացման պատասխանատու Լևոն Միրզոյան
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը
mirzoyan.levon@gmail.com, 077 41 24 49

Կ. Տ